

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԵՍԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԳՐԱՏԻ**

**ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒԸ  
ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1846-1917 ԹԹ.**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ - 2019**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության  
ինստիտուտի գիտական խորհրդում:

**Գիտական ղեկավար՝**  
դոկտոր,

պատմական գիտությունների

պրոֆեսոր Ստեփանյան Գ.

Ա.

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

պատմական գիտությունների դոկտոր

Ստեփանյան Խ. Ռ.

թեկնածու

պատմական գիտությունների

Կարապետյան Ա. Հ.

**Առաջատար կազմակերպություն՝** ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. օգոստոսի 6-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հունիսի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ.

Ղ.



## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Թեմայի արդիականությունը:** Հայ բուրժուազիայի դերակատարությունը 19-րդ դարի Այսրկովկասի տնտեսական կյանքում ցայտուն դրսևորումներ ունեցավ նաև Թիֆլիսի նահանգում և Թիֆլիս քաղաքում: Դա պատահական չէր: Թիֆլիսը Կովկասի փոխարքայության տնտեսական և վարչական կենտրոնն էր, ուստի այստեղ էր կենտրոնացել նաև հայ առևտրաարդյունաբերական կապիտալը: Հայ վաճառականները կուտակած դրամագլուխը ներդնելով արտադրության տարբեր ոլորտներ, արագորեն դարձան խոշոր արդյունաբերողներ ու գործարարներ: Ձևավորվեց հայ առևտրաարդյունաբերական դասը, որն օգտվելով Այսրկովկասի զարգացման հնարավորություններից, կարճ ժամանակում կազմակերպեց ֆաբրիկա-գործարանային արտադրություն, ստեղծեց խոշոր առևտրական ընկերություններ, բանկային և վարկային հաստատություններ:

Թիֆլիսի նահանգի առևտրատնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հնարավոր է դիտարկել և ամբողջացնել հայ վաճառականական և արհեստավորական խավերի, հայ առևտրաարդյունաբերական դասի գործունեության և խաղացած դերի վերհանման շնորհիվ: Հայ բնակչությունն ընդգրկված լինելով Թիֆլիսի նահանգի կենսագործունեության բոլոր ոլորտներում, իր նշանակալի դերակատարությունն ունեցավ նաև նահանգի տնտեսական առաջընթացի և զարգացման գործում: Թեմայի հետազոտության շնորհիվ հնարավորություն է առաջանում բացահայտելու Թիֆլիսի նահանգի երրորդ դասը կազմող հայ բնակչության սոցիալական դրությունը, հայ վաճառականության գործունեության փուլերը, որը պարզ առևտրականից, մանր ապրանք արտադրողից անցում կատարեց դեպի խոշոր արդյունաբերողը, գործարանային արտադրության առաջամարտիկը և բանկիրը:

Թիֆլիսի նահանգի հայ բուրժուազիայի գործունեության ուսումնասիրությունն ունի գիտաքաղաքական կարևոր նշանակություն: Խորհրդային շրջանում անտեսվել է հայության առանձնահատուկ դերը, ինչպես նաև հայկական կապիտալի մեծ ներդրումը նահանգի սոցիալ-տնտեսական և առևտրաարդյունաբերության վերելքն ապահովելու գործում:

Թիֆլիսի նահանգի և Թիֆլիս քաղաքի առևտրատնտեսական հարաբերություններում հայ առևտրաարդյունաբերական դասի դերակատարության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համապարփակ և ավելի խորն ընկալել նրա գործունեությունը նաև նահանգի հասարակական կյանքի շատ ասպարեզներում, քաղաքների, նրանց կենսագործունեության, քաղաքային միջավայրի ձևավորման, հայ ազգային կյանքին և կառույցներին ցուցաբերած բարեգործական ձեռնարկներում:

Թեմայի արդիականությունը կարևորվում է նաև Թիֆլիսի նահանգում և Թիֆլիս քաղաքում հայկական առևտրատնտեսական ժառանգության, նրա տեղի ու դերի գնահատման և արժևորման տեսանկյունից: Հետևաբար, տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը չի կարող ամբողջական լինել առանց հայ առևտրաարդյունաբերողների դերի վերհանման, մանավանդ, որ այն դուրս էր գալիս զուտ Թիֆլիսի նահանգի շրջանակներից և ազդեցիկ էր ողջ Այսրկովկասում ու Ռուսական կայսրությունում՝ ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:** Առենախոսության նպատակն է ներկայացնել հայ վաճառականական և արհեստավորական խավերի, արդյունաբերողների ներդրումը Թիֆլիսի նահանգի տնտեսական զարգացման գործում, վեր հանելով պատմական փաստերը, քննելով նախադրյալները, սոցիալական միջավայրը և այն գործոնները, որոնք հնարավոր դարձրին ձեռք բերել գերիշխող դիրք առևտրի և ձեռնարկատիրական գործունեության բոլոր ոլորտներում: Նշյալ նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- քննության ենթարկել 18-19-րդ դարերի սահմանագծին Վրաստանի, ավելի ուշ՝ Թիֆլիսի նահանգի քաղաքային բնակչության պատկերը, դրա ձևավորման պատմական նախադրյալները,

- ներկայացնել արհեստագործական, մանր ապրանքային արտադրությունում և առևտրում հայ վաճառականական և արհեստավորական խավերի դերը,

- բացահայտել նահանգի ֆաբրիկա-գործարանային խոշոր արդյունաբերության մեջ հայ արդյունաբերողների գերիշխող դիրքը,

- բացահայտել բանկային և վարկային գործում հայկական ֆինանսական կապիտալի խաղացած դերը Թիֆլիսի նահանգի և Այսրկովկասի ֆինանսատնտեսական կյանքում,

- վեր հանել հայ առևտրաարդյունաբերական դասի վճռորոշ դերակատարությունը Այսրկովկասի առևտրատնտեսական հարաբերություններում Թիֆլիսի նահանգի զբաղեցրած տեղի գործում,

- ներկայացնել քաղաքային կառավարման մարմիններում հայերի մեծամասնություն կազմելու պատճառները, օրինաչափությունը,

- հայ խոշոր ձեռնարկատերերի կոնկրետ օրինակներով ցույց տալ նահապետական մեթոդներով գործելու հայ վաճառականի ավանդական կերպարի նկատմամբ տիրող մտայնության հաղթահարման գործընթացը:

**Աշխատանքի գիտական նորույթը:** Թվարկած խնդիրների և հարցերի նորովի քննությամբ է պայմանավորված ներկա աշխատանքի գիտական նորույթը: Այն առաջին գիտական փորձն է՝ համակողմանիորեն ուսումնասիրելու հայ առևտրաարդյունաբերողների դերը Թիֆլիսի նահանգի առևտրատնտեսական կյանքում: Թեմայի շուրջ ուսական կայսերական

վիճակագրական մի շարք տվյալները, որոնք կարևոր սկզբնաղբյուր են հանդիսացել աշխատանքը շարադրելիս, նախկինում շրջանառության մեջ չեն դրվել հայ ուսումնասիրողների կողմից: Առաջին անգամ ներկայացվել է հայ վաճառականության ժառանգական տների պատմությունը, մոտ երկու տասնյակ հայ խոշոր արդյունաբերողների և բանկիրների առևտրական, ձեռնարկատիրական, հասարակական գործունեությունը: Ատենախոսության մեջ շրջանառության են դրվել ժամանակի մամուլում առկա մեծ քանակությամբ նյութեր, տվյալներ, փաստեր, որոնք չեն հաղիպում արխիվային նյութերում, վավերագրերում և վիճակագրական տեղեկագրերում:

**Ուսումնասիրության մեթոդաբանությունը:** Ատենախոսությունը շարադրված փաստերի ու սկզբնաղբյուրների համեմատական-համադրական վերլուծության սկզբունքով: Ըստ արտադրության ոլորտների և գործունեության տեսակի ներկայացված է հայկական ֆինանսատնտեսական ներուժը, այն համադրելով ինչպես նահանգի ներսում այլ ազգությունների տնտեսական հնարավորությունների, այնպես էլ Ռուսական կայսրության համապատասխան ոլորտների հետ: Տրված է նաև հայ առևտրաարդյունաբերողների գործելակերպի և նրանց առջև ծառայած խնդիրների քննական վերլուծությունը, ինչը հնարավորություն է տվել ավելի ամբողջական պատկերացում կազմելու հայ բուրժուազիայի ձևավորման ու գործունեության մասին:

**Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները:** Ատենախոսության ժամանակագրական շրջանակները ընդգրկում են 1846-1917 թթ.: Ժամանակագրական նման մոտեցումը պայմանավորված է Թիֆլիսի նահանգի կազմավորման և գոյության շրջանով: Մանրամասն անդրադարձ է կատարված հատկապես Թիֆլիսի նահանգում մեքենայացված արտադրության և բանկային գործի զարգացման շրջանին՝ 1870-1917 թթ., որը դարձավ հայ ձեռնարկատերերի գործունեության վերելքի շրջանը ողջ Այսրկովկասում և Ռուսական կայսրությունում:

**Ուսումնասիրության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացություններն արտացոլված են հեղինակի հրատարակած վեց գիտական հոդվածներում և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի XXXVIII և XXXIX գիտական նստաշրջաններում կարդացված զեկուցումներում:

**Աղբյուրների և գրականության տեսություն:** Հիմնահարցի ուսումնասիրման համար բացառիկ կարևորություն ունեն Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ)<sup>1</sup> և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 243; ֆ. 93, գ. 1, գ. 231; ֆ. 541, գ. 1, գ. 1:

թանգարանի (ԳԱԹ)<sup>2</sup> նյութերը: Թեմայի լուսաբանման համար իբրև սկզբնաղբյուր են ծառայել նաև տարբեր ժողովածուներում հրատարակված վավերագրերը<sup>3</sup>, որոնք նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Արժեքավոր մյուս տպագիր սկզբնաղբյուրը՝ «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր»<sup>4</sup> 12 հատորանոց ժողովածուն է<sup>4</sup>, որում արժեքավոր տեղեկություններ կան հայ վաճառականների, ձեռնարկատերերի, կապալառուների գործունեության մասին: Ժողովածուն հատկապես կարևորվում է այն առումով, որ այստեղ հիշատակված են առևտրական ամենատարբեր գործարքներին, կապալների աճուրդներին մասնակցող, արտադրական ձեռնարկություններ հիմնելու նախաձեռնությամբ հանդես եկած հայ վաճառականների անունները, ովքեր բացակայում կամ աղավաղված են վրացի հեղինակների աշխատություններում:

Թիֆլիսի նահանգի առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի ծավալի, աշխատողների քանակի, բաժնետիրական ընկերությունների հիմնադիր դրամագլխի, բանկերի դրամաշրջանառության, ինչպես նաև՝ հայ բնակչության թվի, սոցիալական կազմի, զբաղմունքի, արհեստների, արտաքին և ներքին առևտրի և այլ հարցերի մասին հարուստ տեղեկություններ են պարունակում ռուսական կայսերական վիճակագրական պաշտոնական տեղեկագրերը<sup>5</sup>: Դրանք նաև հնարավորություն են ընձեռում համեմատելու ռուսական կայսրության և Թիֆլիսի նահանգի նմանատիպ ձեռնարկությունների արտադրության ծավալները հայկականների հետ: Վերլուծելով այդ տվյալները, ամբողջական է դառնում հայ արդյունաբերողների գերիշխող, իսկ արդյունաբերության մի շարք ճյուղերում՝ մենիշխան դիրքը Թիֆլիսի նահանգում:

---

<sup>2</sup> Տե՛ս ԳԱԹ, Ներսես Աբելյանի անվան ֆոնդ, գ. 5:

<sup>3</sup> Տե՛ս Обзорение Российских владений за Кавказом, ч. I, II, IV, СПб, 1836; Сборник сведений о Кавказе, т. VI, Тифлис, 1880, т. IX, Тифлис, 1885; Присоединение Восточной Армении к России, сб. док., под ред. Ц. П. Агаяна, т. I, изд. АН Арм. ССР, Ереван, 1972.

<sup>4</sup> Տե՛ս Акты собранные Кавказскою археографическою комиссиею (АКАК), т. I-XII, под ред. А. Д. Берге, Тифлис, 1866-1904.

<sup>5</sup> Տե՛ս Сборник статистических сведений о Кавказе, т. I, Тифлис, 1869; Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. 1, под ред. Е. Кондратенко, Тифлис, 1902; Свод статистических данных о населении Закавказского края. Извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893; Указатель действующих в империи акционерных предприятий, под ред. В. А. Дмитриева-Мамонова, С.-Петербург, 1903; Указатель действующих в империи акционерных предприятий и торговых домов, 1. (торгово-промышленные предприятия), под ред. В. А. Дмитриева-Мамонова, С.-Петербург, 1905; Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., под ред. Н. А. Тройницкого, изд. Центр. стат. ком. М-ва вн. дел, т. LXIX (69), Тифл. губ., СПб, 1905.

Թեմայի լուսաբանման համար աղբյուրագիտական կարևոր սկզբնաղբյուր է «Կովկասյան օրացույցը» («Кавказский календарь»)<sup>6</sup>: Այստեղ առկա են հայկական բանկերի և ֆինանսա-վարկային կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները, առևտրային տների գործունեությունը, Թիֆլիսի կարևոր ֆաբրիկաների ու գործարանների, արտադրական ձեռնարկությունների, արհեստանոցների, մանուֆակտուրաների, տպարանների, խանութների, դեղատների, պահեստների ցուցակները, ինչպես նաև՝ վաճառականների, գործարանատերերի, բանկիրների, տնատերերի անունները, որոնց համադրությամբ էլ ի հայտ է գալիս հայ արդյունաբերողների, տնտեսական գործունեության ծավալները, հայկական կապիտալով ձեռնարկությունների կշիռը Թիֆլիսի նահանգի ընդհանուր տնտեսության մեջ, ինչպես նաև հայ առևտրաարդյունաբերողների տնտեսական գերիշխող դիրքը արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Թիֆլիսի նահանգի հայ առևտրաարդյունաբերական կապիտալի ստեղծման վերաբերյալ ուշագրավ նյութեր են պարունակում Ռուսաստանում արդյունաբերական վիճակագրության հիմնադիր Վասիլի Վարզարի (1851-1940 թթ.) խմբագրությամբ լույս տեսած վիճակագրական տեղեկագրերը<sup>7</sup>: Հեղինակը դասակարգել է արդյունաբերական ձեռնարկությունները, վիճակագրական տվյալների հիման վրա ներկայացրել ձեռնարկությունների, բաժնետիրական ընկերությունների տեղը կայսրության տնտեսական համակարգում: Վերլուծելով այդ տվյալները, ամբողջական է դառնում հայ արդյունաբերողների գերիշխող, իսկ արդյունաբերության մի շարք ճյուղերում՝ մենիշխան դիրքը Թիֆլիսի նահանգում:

Թեմային առնչվող նյութեր սփռված են ժամանակի պարբերական մամուլի տարբեր հրատարակություններում, որոնք հաճախ սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել տարաբնույթ հարցերի լուսաբանման համար<sup>8</sup>:

Աշխատանքը շարադրելիս օգտագործել ենք հայ և օտար հեղինակների մենագրություններն ու հոդվածները, որոնցում առկա են մեզ հետաքրքրող

---

<sup>6</sup> Տե՛ս «Кавказский календарь», Тифлис, 1846-1916.

<sup>7</sup> Տե՛ս Список фабрик и заводов Европейской России, под ред. В. Е. Варзара, С.-Петербург, 1903; Список фабрик и заводов Российской империи, под ред. В. Е. Варзара, СПб, 1912; Статистические сведения о фабриках и заводах по производствам необложенным акцизом за 1900 год, под ред. В. Е. Варзара, СПб, 1903.

<sup>8</sup> Տե՛ս «Արարատ» (Թիֆլիս), «Արձագանք» (Թիֆլիս), «Գործ» (Թիֆլիս), «Գարուն» (Թիֆլիս), «Թատրոն» (Թիֆլիս), 1893, «Ժողովուրդ» (Երևան), «Կռունկ հայոց աշխարհին» (Թիֆլիս), «Կովկաս» (Թիֆլիս), «Հայրենիք» (Բոստոն), 1928, «Հիւսափայլ» (Մոսկվա), «Հովիտ» (Թիֆլիս), «Հորիզոն» (Թիֆլիս), «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս), «Մուրճ» (Թիֆլիս), «Վաճառական» (Թիֆլիս), «Տարագ» (Թիֆլիս), «Փորձ» (Թիֆլիս), «Кавказ», (Тифлис), «Тифлисский листок» (Тифлис).



առանձին հարցերի վերաբերյալ հարուստ փաստագրական նյութեր: Հայ հեղինակներից թեմային առնչվող տարբեր խնդիրներին են անդրադարձել Ալ. Երիցյանը<sup>9</sup>, Գ. Թումանովը<sup>10</sup>, Դ. Անանունը (Տեր-Դանիելյան)<sup>11</sup>, Ա. Սարուխանը<sup>12</sup>, Լեոն<sup>13</sup>, Վ. Աբրահամյանը<sup>14</sup>, Վ. Մարտիրոսյանը<sup>15</sup> և ուրիշներ: Նշված հեղինակներից քննարկված հարցերի լայն շրջանակով աչքի է ընկնում հատկապես Դավիթ Անանունի եռահատոր աշխատությունը, որտեղ շարադրել է արևելահայերի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի պատմությունը, ներկայացրել հայերի խաղացած դերը Այսրկովկասի տնտեսական զարգացման գործում: Դ. Անանունը փաստարկված գնահատել է Թիֆլիսի նահանգի հայ արդյունաբերողների տնտեսական ներուժը, զբաղեցրած տեղը, ազդեցությունը, բացահայտել այն գործոնները, որոնց շնորհիվ հայ բուրժուազիան առևտրում և արտադրության շատ ճյուղերում դարձավ առաջատար: Նա կարևորել է այն հանգամանքը, որ հայ վաճառականությունը դուրս եկավ իր նահապետական վիճակից, համարձակորեն ներդրեց իր կուտակած դրամագլուխը արտադրության ոլորտ, ստեղծեց բաժնետիրական ընկերություններ, ֆինանսա-բանկային հաստատություններ, որոնք մրցակից էին ոչ միայն տեղական, այսրկովկասյան, այլև՝ ռուսական և արտասահմանյան խոշոր ընկերություններին: Նա անդրադարձել է նաև Թիֆլիսի նահանգի քաղաքների, հատկապես Թիֆլիսի քաղաքային կառավարման մարմիններում հայերի գերակշռությանը, հայ մեծաքանակ տնատերերին, նրանց նյութական կարողությանը, որոնք առաջ են բերել վրացի ազգայնականների, ազնվականության և նորահայտ բուրժուազիայի թշնամանքը:

Թեմային առնչվող առանձին հարցերի լուսաբանման համար օգտվել ենք 19-րդ դարի ռուս և վրացի հեղինակների աշխատություններից,

---

<sup>9</sup> Տե՛ս Երիցյանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում (1800-1832), մաս Ա, Թիֆլիս, 1894: Նույնի՝ Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրութիւնը, «Փորձ», Թիֆլիս, 1879, հ.10, էջ 1-34:

<sup>10</sup> Տե՛ս Туманов Г. М., Характеристики и воспоминания, кн. 2, Тифлис, 1905.

<sup>11</sup> Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ.1, Բաքու, 1916, հ. 2 (1870-1900), Էջմիածին, 1922, հ.3 (1901-1918), Վենետիկ, 1926:

<sup>12</sup> Տե՛ս Սարուխան Ա., Աղեքսանդր Մանթաշեանց. Մեծ վաճառական և բարեգործը, Վիեննա, 1931: Նույնի՝ Վրաստան և հայերը, Վիեննա, 1939:

<sup>13</sup> Տե՛ս Լեո, Երկ. Ժող., հ. 4, Երևան, 1984: Նույնի՝ Գրիգոր Արծրունի, Երկ. Ժող., հ. 6, Երևան, 1987, էջ 207-726:

<sup>14</sup> Տե՛ս Աբրահամյան Վ., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Երևան, 1971:

<sup>15</sup> Տե՛ս Մարտիրոսյան Վ., Հայերը Վրաստանի առևտրատնտեսական կյանքում. Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1996, էջ 148-157:

հաղորդումներից: Մասնավորապես Ա. Սազոնովը<sup>16</sup>, Ա. Խախանովը<sup>17</sup>, Ա. Մակարովը<sup>18</sup>, Դ. Բակրաձեն և Ն. Բերզենովը<sup>19</sup> ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Այսրկովկասի տնտեսական վիճակի, առևտրատնտեսական հարաբերությունների, Թիֆլիսի նահանգում և Թիֆլիս քաղաքում հայկական կապիտալի, հայ վաճառականների, արհեստավորների, ձեռնարկատերերի մասին, համեմատության մեջ ցույց տալով նրանց ունեցած առավելությունը Այսրկովկասի և Թիֆլիսի նահանգի մյուս ազգությունների նկատմամբ:

Հայ հեղինակներ Ս. Մամուլովը<sup>20</sup>, Ի. Ալիխանովը<sup>21</sup>, Ա. Գեվեյանը<sup>22</sup> անդրադառնալով Վրաստանի և Թիֆլիսի հայերի դերին առևտրի, արհեստների, արդյունաբերության, մշակույթի ոլորտներում, ներկայացրել են նաև առանձին հայ ձեռնարկատերերի կենսագրական ուշագրավ տվյալներ, տվել նրանց բարեգործական, մշակութային և հասարակական գործունեության գնահատականը:

Ատենախոսությունում անդրադարձ կատարված տարբեր հարցերի առավել հանգամանալի և բազմակողմանի ներկայացման համար օգտվել ենք ակադեմիկոս Ա. Մելքոնյանի<sup>23</sup> և Գ. Ստեփանյանի<sup>24</sup> աշխատություններից: Ա. Մելքոնյանի մենագրությունում քննության նյութ են դարձել մեզ հետաքրքրող Ախալցխայի և Ախալքալաքի արհեստավորների ու առևտրականների գործունեության բազմաթիվ կողմերը, նաև՝ Ջավախքի ու Թիֆլիսի նահանգի հայության ժողովրդագրության հարցերը: Գ. Ստեփանյանի ուսումնասիրությունները մեզ օգնել են ամբողջացնելու թիֆլիսահայ այն վաճառականների ու արդյունաբերողների գործունեությունը, որոնք հիմք դրեցին Բաքվի նավթարդյունաբերությանը, նշանակալից դեր խաղալով նաև ձկնարդյունաբերության ու մի շարք այլ ոլորտներում:

---

<sup>16</sup> Տե՛ս Ա. Сазонов А. Н., Армяне на Кавказе. Статистические наброски. Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-е изд., Москва, 1898, с. 253-266.

<sup>17</sup> Տե՛ս Ա. Хаханов А. С., Положение армян в Грузинском царстве. Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-0 е изд., Москва, 1898, с. 549-553.

<sup>18</sup> Տե՛ս Ա. Макаров А., Закавказье в торговом отношении. Доклад Т. С. Морозову, Москва, 1884.

<sup>19</sup> Տե՛ս Ա. Бакрадзе Д., Берзенов Н., Тифлис в историческом и этнографическом отношении, СПб, 1870.

<sup>20</sup> Տե՛ս Ա. Мамулов С. С., Армяне в Грузии, Москва, 1995.

<sup>21</sup> Տե՛ս Ա. Алиханов И. И., Дней минувших анекдоты, Москва, 2004.

<sup>22</sup> Տե՛ս Ա. Гевенян С., Мой Тифлис, Эчмиадзин, 2002.

<sup>23</sup> Տե՛ս Ա. Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

<sup>24</sup> Տե՛ս Ա. Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2010: Նույնի՝ Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:

Թեմայի ուսումնասիրության առումով ուշագրավ են Ս. Կարապետյանի<sup>25</sup>, Ա. Պետրոսյանի<sup>26</sup>, Թ. Վարդանյան-Այվազյանի<sup>27</sup> աշխատությունները: Ա. Պետրոսյանի արժեքավոր հոդվածը նվիրված է մոքլաքների (քաղաքի բնակիչներ, քաղաքացիներ) խնդրին, նրանց իրավական դրությանը և արտոնություններին թե Վրաց թագավորության, թե Վրաստանում ռուսական տիրապետության շրջանում: Հոդվածում վեր է հանված մոքլաքների՝ որպես նոր դասի, ծագման հարցը, փաստարկված ներկայացվել է նրանց մեծ դերը Վրաստանի առևտրա-արտադրական կյանքում: Հեղինակն ընդգծել է, որ մոքլաքներին, որոնք բացառապես հայ վաճառականներ և արհեստավորներ էին, Վրաց թագավորները տալով արտոնություններ, ելնում էին իրենց երկրի տնտեսական ու քաղաքական շահերից, և հանգել այն եզրակացության, որ մոքլաքների ինստիտուտի հիմքի վրա ծնունդ առան հայ ձեռնարկատերերը: Թ. Վարդանյան-Այվազյանն իր ուսումնասիրությունում անդրադարձել է կատարել Թիֆլիսի նահանգի, առանձին գավառների և Թիֆլիս քաղաքի ժողովրդագրությանը, հասարակական-քաղաքական, մշակութային, ինչպես նաև՝ 19-րդ դարի երկրորդ կեսին Թիֆլիսի առևտրա-տնտեսական կյանքում, Թիֆլիսի քաղաքային կառավարման գործում հայերի խաղացած դերին:

Աշխատանքում արժարժված մի շարք հարցերի լուսաբանման համար կարևոր են Խ. Դադայանի աշխատությունները<sup>28</sup>, հատկապես՝ Թիֆլիսում հայոց առևտրատնտեսական ներկայությանը նվիրված ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը աղբյուրագիտական հարուստ տեղեկությունների հիման վրա ներկայացրել է հայերի անգերազանցելի դերը առևտրի, արդյունաբերության, ֆինանսա-բանկային ոլորտներում, ընդգծելով, որ հայ կապիտալիստներն առաջինն էին նաև Թիֆլիսի նահանգի արդյունաբերությունում նորագույն եվրոպական չափանիշների ներդրման, արդյունաբերության մեքենայացման գործում: Հոդվածում ներկայացված են թիֆլիսահայ բազմաթիվ ձեռնարկատերերի տնտեսական գործունեությունը, նրանց մենաշնորհային դիրքը մի շարք առաջատար ոլորտներում:

---

<sup>25</sup> Տե՛ս Կարապետյան Ս. Թիֆլիսի քաղաքագլուխները, Երևան, 2003: Նույնի՝ Հայերը Կախեթում, RAA գիտ. ուսումն-եր, գիրք Ը, Երևան, 2004: Նույնի՝ Ախալցխա (Սամցխե նահանգ), RAA մատենաշար, գիրք ԺԱ, Երևան, 2008:

<sup>26</sup> Տե՛ս Պետրոսյան Ա., Մոքլաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, ԼՀԳ, 1966, N 12, էջ 89-99:

<sup>27</sup> Տե՛ս Վարդանյան-Այվազյան Թ., Թիֆլիսի և մերձակա բնակավայրերի հայությունը 5-21-րդ դդ. (համառոտ ակնարկ), «Գլոբուս», թիվ 8-9, Երևան, 2014, էջ 5-107:

<sup>28</sup> Տե՛ս Դադայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920թ.), Երևան, 2006: Նույնի՝ Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար-1918), «21-րդ դար», թիվ 1 (19), Երևան, 2008, էջ 124-151:

Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք վրացի հետազոտողների՝ Գ. Բակրաձեի<sup>29</sup>, Պ. Գուգուշվիլի<sup>30</sup>, Շ. Մեսխիայի<sup>31</sup>, Շ. և Օ. Թեթվաձենների<sup>32</sup>, Է. Խոջաբարիայի<sup>33</sup>, Յու. Անչաբաձեի<sup>34</sup>, Շ. Չխեթիայի<sup>35</sup> աշխատություններից: Նրանք շրջանառության մեջ են դրել մեծ թվով արխիվային նյութեր, վավերագրեր, որոնք հնարավորություն են տվել մեզ համեմատական վերլուծություն կատարելու մեր ձեռքի տակ եղած պաշտոնական վիճակագրական տվյալների հետ և ստանալ առավել ամբողջական պատկեր քննարկվող տարբեր հարցերի վերաբերյալ: Այս ամենով հանդերձ, թվարկած վրացի հեղինակներից շատերը դրսևորել են միտումնավոր մոտեցում հատկապես հայ վաճառականներին, արհեստավորներին և ձեռնարկատերերին վերաբերող հարցերում, ներկայացրել թերի տվյալներ հայապատկան ձեռնարկությունների մասին: Օրինակ, Թիֆլիսի և Գորիի մոքալաքների մասին խոսելիս, որոնք բոլոր սկզբնաղբյուրներում, ռուսական վավերաթղթերում, արխիվային փաստաթղթերում նշվում են, որ բացառապես հայեր էին և կազմում էին Թիֆլիսի նահանգի երրորդ դասը, վրացի հեղինակները շրջանցում են այս փաստը, խոսում անորոշ, չհիշատակելով նրանց ազգությունը, դերը քաղաքների արհեստների մեջ և առևտրում<sup>36</sup>: Պ. Գուգուշվիլիին բնորոշ է վրացացնել և որպես վրացի ներկայացնել հայ վաճառականներին, արհեստավորներին, արդյունաբերողներին<sup>37</sup>: Նա առանց հիմնավորման կասկածի տակ է դնում իր իսկ կողմից մատնանշված այն փաստը, որ Թիֆլիսի արհեստավորների մեծ մասը հայեր էին<sup>38</sup>: Պ. Գուգուշվիլին և Գ. Բակրաձեն չեն նշում հայապատկան ձեռնարկատերերի ազգային պատկանելությունը, այն դեպքում, երբ անպայման նշում են մյուսներինը՝ ֆրանսիացի, գերմանացի, լեհ, ռուս, հազվադեպ հանդիպող

---

<sup>29</sup> Տե՛ս՝ Գ. Բակրաձեի Գ. Կ., *Возникновение и развитие капиталистической промышленности в Грузии в XIX веке*, Тбилиси, 1958.

<sup>30</sup> Տե՛ս՝ Պ. Գուգուշվիլիի Պ., *Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX-XX вв.*, Тбилиси, 1957.

<sup>31</sup> Տե՛ս՝ Մ. Մեսիա Մ. Ա., *Города и городской строй феодальной Грузии. XVII-XVIII вв.*, Тбилиси, 1959.

<sup>32</sup> Տե՛ս՝ Մ. Թեթվաձեի Մ., *Тетвадзе О., Армяне в Грузии (с древних времен до сегодняшнего дня)*, Тбилиси, 2008.

<sup>33</sup> Տե՛ս՝ Մ. Խոջաբարիայի Մ. Վ., *Очерки социально-экономической истории Грузии*, Тбилиси, 1974.

<sup>34</sup> Տե՛ս՝ Մ. Անչաբաձեի Մ. Դ., *Волкова Н. Г., Старый Тбилиси. Город и горожане в XIX веке*, Москва, 1990.

<sup>35</sup> Տե՛ս՝ Մ. Կետիայի Մ., *Тбилиси в XIX столетии*, Тбилиси 1942; *Կետիայի Մ., Армяне в Тбилиси в шестидесятих годах XIX века*, ՊԲՀ, 1958, N 3, с. 161-167.

<sup>36</sup> Տե՛ս՝ Մ. Անչաբաձեի Մ. Դ., *Волкова Н. Г.*, նշվ. աշխ., էջ 27-28, 77 և այլն:

<sup>37</sup> Տե՛ս՝ Մ. Գուգուշվիլիի Մ., նշվ. աշխ., էջ 46-47, 109, 284, 289 և այլն:

<sup>38</sup> Տե՛ս՝ նույն տեղում, էջ 89-90:

վրացի, մահմեդական կապիտալիստ և այլն<sup>39</sup>: Գ. Բակրաձեն թվարկելով Թիֆլիսի նահանգի մեքենայացված խոշոր գործարանները, որոնց մեծ մասը պատկանում էին հայերին, դրանց կողքին թվարկում է հայերին չպատկանող փոքր մեխանիկական արտադրամասերը, տպավորություն ստեղծելով մեքենայացված արդյունաբերության մեջ բոլոր ազգերի հավասար դերի մասին: Հեղինակը միաժամանակ միտումնավոր կերպով համահարթեցնում է հայ և այլազգի արդյունաբերողների դերն ու կշիռը Թիֆլիսի նահանգի արդյունաբերական արտադրության մեջ: Հայ խոշոր արդյունաբերողների (առանց նշելու նրանց ազգությունը) արտադրանքը ներկայացնելուց հետո, Գ. Բակրաձեն միշտ դրա կողքին դնում է ոչ հայկական փոքր ձեռնարկություններ, շեշտելով դրանց տեղերի ազգությունը, որոնց տարեկան արտադրանքը ծավալային և գումարային առումով մի քանի անգամ զիջում է հայ գործարանատերերի արտադրանքին<sup>40</sup>: Գ. Բակրաձեն նույն կերպ է վարվում նաև բանկերը ներկայացնելիս: Նա տալիս է ոչ հայկական բանկերի, նրանց բաժանմունքների գործունեության նկարագիրը, գործարքների ծավալները, հիմնադրման թվականները, բայց ոչ մի խոսք Կովկասում անմրցակից հայկական երկու ֆինանսա-բանկային հսկաների՝ Թիֆլիսի առևտրային բանկի և Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության մասին: Չնայած դրան, նա բոլորովին այլ առիթով ներկայացնում է հատկապես վրացական բանկերի հետ անհամեմատելի այն մեծ դրամաշրջանառությունը, որ ունեին այդ բանկերը, չնշելով սակայն, որ դրանք հայկական են<sup>41</sup>:

Նշված վրացի հեղինակներից թերևս միայն Շ. Չխեթիան, մասամբ նաև Շ. Մեսխիան և Է. Խոշթարիան են անաչառորեն ներկայացրել հայերի դերը Վրաստանի, Թիֆլիսի նահանգի և Թիֆլիս քաղաքի առևտրատնտեսական հարաբերություններում: Մասնավորապես, Շ. Չխեթիան իր աշխատություններում նշել է, որ հայերը բնակվելով Թիֆլիսում և այլ քաղաքներում, մշտապես կազմել են քաղաքային բնակչության մեծամասնությունը, ակտիվորեն մասնակցել երկրի քաղաքական և տնտեսական կյանքին, բարձր գնահատել հայերի դերը հատկապես Թիֆլիսի շինարարության, առևտրի, արհեստների, մշակույթի զարգացման գործում: Նա թվական տվյալներով հիմնավորել է հայերի գերիշխող դիրքը Թիֆլիսի առևտրում, արժևորել Թիֆլիսի հայ քաղաքագլուխների, ինչպես նաև արհեստավորների, արդյունաբերողների դերը, փաստել, որ հայերին էին պատկանում Թիֆլիսի ձեռնարկությունների, հյուրանոցների, իջևանատների, արհեստանոցների, խանութների, պահեստների, մատանների մեծ մասը,

<sup>39</sup> Տե՛ս Բակրաձե Գ. Կ., նշվ. աշխ., էջ 15, 70, 138-139, 140-141, 165, 170, 181 և այլն:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 71, 75, 177, 179-180, 183-184, 185 և այլն:

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 83-84:

շեշտելով, որ Թիֆլիսի առևտրաարդյունաբերական դասի 2/3-ը կազմում էին հայերը:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:**  
Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

**Ներածությունում** ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, ժամանակագրական շրջանակները, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

**ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ** վերնագրված է «**Հայ վաճառականական և արհեստավորական դասը Վրաստանում և Թիֆլիսի նահանգում**» և բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում**՝ «**Հայ վաճառականները և նրանց դերը Վրաստանի տնտեսական կյանքում 18-րդ դարի վերջին-19-րդ դարի առաջին կեսին**», ներկայացվում են Վրաստանում հայերի հաստատման, քաղաքային բնակչության, երրորդ դասի (վաճառականներ և արհեստավորներ) հիմնական մասը կազմելու պատմական նախադրյալները, հանգամանքները, սոցիալական միջավայրը և այն գործոնները, որոնք հնարավոր դարձրին հետագայում հայ առևտրաարդյունաբերական դասին ձեռք բերել գերիշխող դիրք Թիֆլիսի նահանգի առևտրի և ձեռնարկատիրական գործունեության բոլոր ոլորտներում: Հայ արհեստավորներն ու վաճառականները հատկապես Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) հետո գաղթելով Վրաստան, բնակություն էին հաստատում հիմնականում քաղաքներում: Վրացահայ վաճառականները վայելում էին վրաց թագավորների, ավելի ուշ՝ 19-րդ դարի սկզբից, ռուսական տեղական իշխանությունների հովանավորությունը, քանի որ նրանք մեծ եկամուտներ էին ստանում վաճառականների տնտեսական գործունեությունից: Վրաստանում վաճառականական և արհեստավորական դասը ազատ քաղաքացիներն էին՝ մոքալաքները, որոնք նշանակալի դեր էին խաղում երկրի տնտեսական զարգացման գործում, արտաքին և ներքին առևտրում: Նրանցից ձևավորվեց առևտրաարդյունաբերական դասը, որը սկսեց մեծ դեր խաղալ Թիֆլիսի նահանգի և Թիֆլիս քաղաքի առևտրատնտեսական հարաբերություններում, նաև՝ Այսրկովկասի տնտեսական կյանքում:

**Երկրորդ ենթագլխում**՝ «**Հայ վաճառականական և արհեստավորական դասի դերը Թիֆլիսի նահանգի մանր ապրանքային արդյունագործությունում, համքարային արտադրությունում և առևտրում**», անդրադարձ է կատարվում Թիֆլիսի նահանգի կազմավորմանը, նահանգի հայերի թվաքանակին, սոցիալական դրությանը, ըստ ազգությունների

քաղաքային բնակչության վիճակագրական տվյալներին: Դրանք փաստում են, որ մինչև 20-րդ դարի 10-ական թթ. և նույնիսկ դրանից հետո էլ Թիֆլիսի նահանգի քաղաքներում հայերը թվաքանակով մշտապես գերազանցել են մյուս ազգերին, այդ թվում՝ վրացիներին: Ցույց ենք տվել, որ հայերը գերակշռել են նաև նահանգի քաղաքների ինքնակառավարման մարմիններում և Թիֆլիսի քաղաքային դումայում, ինչը պայմանավորված էր հայերի նյութական կարողությամբ, ունեցվածքով, վճարած բարձր հարկերով, որը, ըստ գործող օրենքի, նրանց տալիս էր ընտրական իրավունք:

Այս ենթագլխում համառոտ ներկայացվել են Թիֆլիսի նահանգի հայ համքարությունները և արհեստները: Հայ արհեստավորները տալիս էին նահանգի համքարային, մանր ապրանքային արտադրության հիմնական մասը: Հայերի ձեռքին էր նաև նահանգի առևտրի մեծ մասը: Հայ վաճառական դասը սկզբնական շրջանում զբաղվելով կապալառությամբ, կուտակեց զգալի դրամագլուխ, հատկապես առևտրի ասպարեզում ընդլայնեց իր գործունեությունը, աստիճանաբար ներթափանցելով նաև արտադրության ոլորտ: Հայ արհեստավորները և վաճառականները Թիֆլիսի նահանգի արհեստագործական, մանր ապրանքային և մանուֆակտուրային արտադրության, առևտրի ոլորտներում իրենց վճռորոշ դերակատարությամբ մեծապես պայմանավորեցին Թիֆլիսի նահանգի տեղը Այսրկովկասի տնտեսական հարաբերություններում: Թիֆլիսը Կովկասի փոխարքայության վարչական և տնտեսական կենտրոնն էր, բայց նաև փաստել ենք, որ տնտեսական կենտրոն դարձավ հատկապես հայ արհեստավորների և առևտրաարդյունաբերողների գործունեության շնորհիվ:

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ** կրում է «**Հայկական արդյունաբերական ձեռնարկությունները, առևտրա-ֆինանսական կազմակերպությունները Թիֆլիսի նահանգում (1870-1917 թթ.) և հայ բուրժուազիայի գործունեությունը**» խորագիրը և բաղկացած է չորս ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Հայ վաճառականության և բուրժուազիայի դերի ու գործունեության գնահատումը 19-րդ դարի հայ մամուլում»,** քննվում են հայկական մամուլի և մտավորականության ներկայացուցիչների բարձրացրած հարցերը, որոնք առնչվում են հայ վաճառականության գործունեության բազմաթիվ ոլորտներին՝ առևտուր, արտադրություն, կրթություն, ազգային խնդիրներ, բարեգործություն և այլն: Դրանք չէին պարունակում միայն քննադատություն, այլ նաև մտահոգություններ էին, որոնցում առկա էին լուրջ առաջարկություններ, խնդիրների լուծման ուղիներ: Դրանք արվում էին հայ վաճառականությանը հզոր, կազմակերպված, մրցունակ տեսնելու, ազգային հոգսերին ընկալունակ և արձագանքող լինելու, ժամանակի պահանջներին համընթաց քայլելու ակնկալիքով: Փաստել ենք, որ արտահայտած մտահոգություններն այս կամ այն կերպ ստացան իրենց լուծումները, որոնք դրսևորվեցին առևտրի, արդյունաբերության, բանկային

ոլորտներում, ազգային ծրագրերին և կառույցներին ցուցաբերած բարեգործական հետևողական ձեռնարկներում, դպրոցների հիմնման, հովանավորության, կրթված մասնագետների պատրաստման հարցերում, հայ խոշոր արդյունաբերողի նոր կերպարի, արտադրության և ձեռնարկատիրական գործունեության նոր մշակույթի ներդրման բազմաթիվ օրինակներում:

**Երկրորդ ենթազխում՝ «Հայկական կապիտալի դերը Թիֆլիսի նահանգի ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ և առևտրում»,** հանգամանորեն ներկայացվում է Թիֆլիսի նահանգում մեքենայացված արտադրության զարգացումը, որն արդյունք էր հատկապես հայ արդյունաբերողների գործունեության: Այս ենթազխում հանգամանորեն ներկայացված են հայկական խոշոր ձեռնարկությունները, որոնք մրցակիցներ չունեին Թիֆլիսի նահանգում, նրանց արտադրության ծավալները, աշխատողների թիվը, մեքենայական և տեխնիկական հագեցվածության մակարդակը: Հայ արդյունաբերողներն անմրցակից էին հատկապես տեքստիլ (Գ. Միրզոյան), կաշվի, թաղիքի և կոշիկի (Գ. Ադելխանյան), ծխախոտի (Ն. Բողարջանց, Ա. Էնֆիաջանց, Մ. Սաֆարյան, «Միր» ընկերություն), չուգունածուլական և մեխանիկական (Գ. Յարայան, Հովհ. Ալիխանյան, Ն. Կարապետյան և ուրիշներ), օճառի-ձեթի (Հովհ. Թաիրյան, Կ. Ալիխանյան, Բասենցյան եղբայրներ և ուրիշներ), կոնյակի, գինու, շամպայնի (Գ. Սարաջև, Անանյաններ, Սողոմոնյան եղբայրներ, Մ. Խուբարյան և ուրիշներ), հրուշակեղենի և կոնֆետի (Հ. Ատովյան, Գ. Գոգայան, Պ. Փրիդոնյան և ուրիշներ), ինչպես նաև հանքանյութերի վերամշակման, փայտամշակման, հանքային ջրերի, սննդի արդյունաբերության ոլորտներում: Հայ առևտրաարդյունաբերողներին էին պատկանում նաև նահանգի խոշոր բաժնետիրական ընկերությունների, առևտրաշրջանառության, անշարժ սեփականության ու կապիտալի մեծ մասը: 20-րդ դարասկզբին Թիֆլիսի առևտրում և արդյունաբերությունում հայերին էր պատկանում բոլոր ձեռնարկությունների 62 %-ը, առևտրի ավելի քան 68 %-ը, շրջանառությունների 73 %-ը և եկամտի 69 %-ը: Ռուսական կայսերական վիճակագրական սկզբնաղբյուրների հիման վրա փաստել ենք, որ հայերի տնտեսական գերազանցությունն ակնհայտ էր նաև առևտրի ասպարեզում: Հայերի տնտեսական գերակշռության և նյութական հզորության ապացույցն էին Թիֆլիսի անշարժ գույքի և ամենաթանկ տների սեփականության մասին վկայող աղբյուրագիտական և վիճակագրական տվյալները: Այսպես, 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին Թիֆլիսի 1-ին կարգի տնատերերի, ամենախոշոր հարկ վճարողների, որոնք իրավունք ունեին մասնակցել Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրությանը և ընտրվել, ճնշող մեծամասնությունը հայերն էին:



**Երրորդ ենթագլխում՝ «Հայկական բանկերը, առևտրա-ֆինանսական մյուս հաստատությունները և վաճառականական կազմակերպությունները»,** ներկայացվում են հայկական բանկային և վարկային կազմակերպությունների ստեղծման և գործունեության պատմությունը, դրամաշրջանառությունը, գործառույթների առանձնահատկությունները: 19-րդ դարի 70-ական թթ. Թիֆլիսի նահանգում ստեղծվեցին հայկական բանկային հաստատություններ, որոնք առաջին էին ամբողջ Կովկասում և ազդեցիկ դերակատարություն են ունեցել Թիֆլիսի նահանգի ու Այսրկովկասի ֆինանսա-տնտեսական կյանքում: Չուտ հայկական կապիտալով ստեղծված խոշոր բանկերն էին՝ Թիֆլիսի առևտրային բանկը, Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունը, Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերությունը: Թիֆլիսի նահանգի բանկային և վարկային գործը, մասնավոր բանկային բիզնեսը տնօրինում էին հայկական ֆինանսական կապիտալի ներկայացուցիչները (<Ուլի. Չիթախյանի, «Օովիանյան և ընկ.»», Փրիդոնյանների, Փիթոյանների և այլոց բանկային գրասենյակները): Հատկապես Թիֆլիսի առևտրային բանկը Ա. Մանթաշյանցի ղեկավարությամբ վերածվեց ռուսական կայսրության լավագույն ֆինանսական հաստատություններից մեկի և միակ բանկն էր Կովկասից, որի բաժնեթղթերը վաճառվում էին Ս. Պետերբուրգի և Մոսկվայի սակարաններում: Իսկ Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերությունը լրացուցիչ և կարևոր լծակ էր հայերի ձեռքին քաղաքային բյուջեի տնօրինումը, ֆինանսական շարժերը, ծախսերի բաշխումը վերահսկելու գործում: Հայկական բանկային հաստատություններն աչքի էին ընկնում նաև իրենց բարեգործական ձեռնարկներով: Նրանք հարյուր հազարավոր ռուբլիների նվիրատվություններ են կատարել Հայոց կաթողիկոսին և Մայր աթոռին, Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը, արևմտահայ գաղթականներին, կրթական հաստատություններին, տարբեր հիմնադրամներին, բարեգործական և աղքատախնամ ընկերություններին: Հայ արդյունաբերողներն ու բանկիրները, կարևորելով մասնագիտական կրթությունը, հիմնեցին առևտրային դպրոցներ, դարձան դրանց հովանավորները: Նշանավոր էին Ալեքսանդր Մանթաշյանց առևտրային դպրոցը և Թիֆլիսի առաջին առևտրային գիմնազիան:

Հայկական ֆինանսա-բանկային կապիտալի խոշորագույն ներկայացուցիչները 1915-1916 թթ. փորձեցին ստեղծել միասնական Հայկական բանկ, որը հավակնություն ուներ դառնալու ռուսական հզոր բանկերի մրցակիցը: Բայց պատմական մի շարք հանգամանքներ անհնար դարձրին դրա իրականացումը:

**Չորրորդ ենթագլխում՝ «Թիֆլիսի նահանգի հայ առևտրաարդյունաբերողների հասարակական, մշակութային, շինարարական, բարեսիրական գործունեությունը»,** ներկայացվում են

առավել նշանավոր, ազդեցիկ և խոշոր հայ ձեռնարկատերերը, բանկիրները, վաճառականական տոհմերը, որոնք մարմնավորում էին Թիֆլիսի նահանգի հայ առևտրաարդյունաբերական դասի ողջ ներուժը և արդյունաբերության բոլոր կարևոր ճյուղերում, առևտրում, բանկային գործում առաջատարներն էին: Հանգամանորեն անդրադարձ է կատարվել նրանց հասարակական գործունեությանը, ազգային ծրագրերին և կառույցներին ցուցաբերած աջակցությանը, բարեգործություններին, առողջապահության, կրթության, արվեստի ոլորտների հովանավորությանը, նախաձեռնություններին, շինարարական ձեռնարկներին, ինչպես նաև՝ Թիֆլիսի նահանգից դուրս նրանց ձեռնարկատիրական, բարեգործական, հասարակական գործունեության չլուսաբանված կամ քիչ հայտնի դրվագներին, որոնց մեծ մասն ամբողջական ձևով ներկայացվում է առաջին անգամ:

**ԵՂՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** տրված են ատենախոսության հիմնական արդյունքները.

- Թիֆլիսի նահանգի հայ առևտրաարդյունաբերական դասը՝ բուրժուազիան, որ հարստացել էր վաճառականությամբ և կապալառությամբ զբաղվելով, ավելի ամրապնդեց իր դիրքերը առևտրատնտեսական կյանքում և առևտրի, արդյունաբերության, բանկային ոլորտներում իր վճռորոշ դերակատարությամբ մեծապես պայմանավորեց Թիֆլիսի նահանգի տեղը Այսրկովկասի տնտեսական հարաբերություններում:

- Թիֆլիսը Կովկասի փոխարքայության վարչական և տնտեսական կենտրոնն էր, և բերված բազմաթիվ օրինակներով փաստել ենք, որ տնտեսական կենտրոն դարձավ նաև հայ արհեստավորների և առևտրաարդյունաբերողների, հայկական կապիտալի շնորհիվ: Իսկ 19-րդ դարի 70-ական թթ.-ից Թիֆլիսի նահանգի ընդգրկվելը ռուսական և համաշխարհային շուկաներ արդյունք էր նաև հայ բուրժուազիայի գործունեության:

- Հայ վաճառականները, կուտակելով հսկայական դրամագլուխ, շատ արագ արձագանքելով ժամանակի պահանջներին, արագորեն դարձան արդյունաբերող կապիտալիստներ, ընդլայնելով իրենց առևտրաարդյունաբերական գործունեությունն ընդհանրապես Այսրկովկասում և, մասնավորապես, Թիֆլիսի նահանգում:

- Մինչև 19-րդ դարի 90-ական թթ. ֆաբրիկա-գործարանային, մեքենայացված արտադրությունը ներդրվեց Թիֆլիսի նահանգի գրեթե բոլոր հիմնական ոլորտներում, որտեղ գերակշռում էին հայ արդյունաբերողները կամ բացառապես հայկական էին: Հայ արդյունաբերողները նաև արդյունաբերական մի շարք ճյուղերի հիմնադիրներն էին Թիֆլիսի նահանգում, իսկ շատ ոլորտներ (ծխախոտի, ձեթ-օճառի, կաշվի, կոշիկի, հրուշակեղենի, կոնյակի, մեխանիկական և այլն) գրեթե ամբողջությամբ

կենտրոնացած էին հայ արդյունաբերողների ձեռքում և մենաշնորհը պատկանում էր նրանց:

- Թիֆլիսի նահանգի գրեթե ամբողջ բանկային և վարկային գործը, մասնավոր բանկային բիզնեսը տնօրինում էին հայկական ֆինանսական կապիտալի ներկայացուցիչները: Նրանք հիմնեցին առաջին բանկային հաստատությունները Թիֆլիսի նահանգում, որոնք առաջինն էին նաև ողջ Այսրկովկասում: Հայկական բանկերն էին, որ համաշխարհային միտումներին համաքայլ, երկրամասում առաջինը սկսեցին վերահսկել արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը՝ ներթափանցելով արդյունաբերության ոլորտ (Ալ. Մանթաշյանցի, Հովհ. Չիթախյանի, Ի. Փիթոյանի և ուրիշների բանկային հաստատությունները), տեղի ունեցավ բանկային կապիտալի սերտաճում արդյունաբերականի հետ և կազմավորվեց ֆինանսական կապիտալը: Հայկական կապիտալով բանկային և վարկային երկու հսկաները՝ Թիֆլիսի առևտրային բանկը և Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունը, մնացին անմրցակից ֆինանսական հաստատություններ ամբողջ Կովկասում՝ ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը:

- Հայկական ֆինանսա-բանկային կապիտալի խոշորագույն ներկայացուցիչները փորձեցին համակենտրոնացնել բանկային կապիտալը, որի արտահայտությունն էին միասնական Հայկական բանկի ստեղծման գաղափարը և դրա իրականացմանն ուղղված գործնական քայլերը: Ստեղծվելիք Հայկական բանկը հավակնություն ուներ դառնալու ռուսական հզոր բանկերի մրցակիցը: Միայն ռուսական կայսրության կործանումը և բոլշևիկյան հեղափոխությունն անհնար դարձրին դրա իրագործումը:

- Ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը զուգընթաց ձևավորվեց հայ կրթված խոշոր արդյունաբերողի նոր կերպար (Գ. Ադեխանյան, Ի. Փիթոյան, Անանյաններ, Ալիխանյաններ, Թամամաշյաններ, Էնֆիաշյանցներ և ուրիշներ), որոնք կտորեցին նախկին այն կարծատիպերը, թե հայ վաճառականներն ունակ են միայն դրամագլուխ կուտակելու, անկարող են կամ խուսափում են առևտրային դրամագլուխը ներդնել արտադրության ոլորտ, գործում են առանձին ու չեն կրում պատասխանատվություն գործընկերների առաջ: Նրանք ներդրեցին ձեռնարկատիրական գործունեության նոր մշակույթ, արտադրության նորարարական միտք, հայերի ավանդական, բավական պարզունակ առևտրային գործունեությունը հասցրին նոր, ավելի բարձր աստիճանի, իրենց կապիտալն օգտագործելով առավել կազմակերպված ձևով: Նրանք դարձան առաջամարտիկներ արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, բաժնետիրական ընկերություններ, բանկային հաստատություններ հիմնելու գործում, որոնք ստեղծվել էին ամբողջովին տեղական հայկական կապիտալի հիման վրա:

- Հայ վաճառականության կրթված նոր սերունդը դարձավ ավելի կազմակերպված, մրցունակ, ժամանակի պահանջներին համընթաց քայլերու ունակ, ազգային հոգսերին ընկալունակ և արձագանքող: Այդ որակներն իրենց դրսևորումներն ունեցան ոչ միայն առևտրի, արդյունաբերության, բանկային ոլորտներում, այլև՝ ազգային ծրագրերին և կառույցներին ցուցաբերած բարեգործական հետևողական բազմաթիվ ձեռնարկներում:

- Կարևորվել և բազմաթիվ օրինակներով հիմնավորվել է, որ հայ առևտրաարդյունաբերողներն աչքաթող չարեցին մասնագիտական կրթական ոլորտը, լավ հասկանալով ձեռնարկատիրական գործունեությունում կրթված մասնագետների անհրաժեշտությունը, ինչի մասին դեռևս 19-րդ դարի 60-ական թթ.-ից բարձրաձայնում էին հայ մամուլը և մտավորականության ներկայացուցիչները: Նրանք կանգ չառան իրենց հայրերի ձեռքբերածի վրա, այլ՝ ընդլայնելով ու զարգացնելով իրենց ձեռնարկատիրական գործունեությունը, միաժամանակ հիմնեցին պետական և մասնավոր մասնագիտական դպրոցներ կամ դարձան արդեն գոյություն ունեցողների միակ հովանավորներն ու ղեկավարները:

Այսպիսով՝ պատմական հանգամանքների բերումով հայերը սոցիալական դրությամբ Թիֆլիսի նահանգում կազմում էին երրորդ դասը: Արհեստավորների, առևտրականների, ձեռնարկատերերի զգալի մասը հայերն էին, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել նահանգի և Թիֆլիս քաղաքի առևտրի ու առևտրային կապիտալի մեծ մասը: Հայ վաճառականությունը կուտակած դրամագլուխը 19-րդ դարի 70-ական թթ.-ից վերածեց արդյունաբերական ու բանկային կապիտալի և Թիֆլիսի նահանգի առևտրաարդյունաբերական կյանքում դարձավ գերիշխող, ինչպիսն էր նախկինում առևտրի, արդյունագործության և համքարային արտադրության ոլորտներում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Թիֆլիսի նահանգի հայ արդյունաբերողները. Գ. Ադելխանյան, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2018, թիվ 3 (19), էջ 54-62:

2. Իսայի Փիթոյան. արդյունաբերողը, բանկիրը, արվեստի հովանավորը, «Կանթեղ», գիտական հոդվածներ, Ասողիկ հրատարակչություն, Երևան, 2018, N 4 (77), էջ 129-138:

3. Թիֆլիսի նահանգի հայ ծխախոտարդյունաբերողները. Էնֆիաջյանցներ, «Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես», գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2018, էջ 301-305:

4. Թիֆլիսահայ գործարարներ. Ալեքսանդր Մանթաշյանց, Միքայել Արամյանց, «Տարածաշրջան և աշխարհ», գիտավերլուծական հանդես, հատոր X, N 1, Երևան, 2019, էջ 34-39:

5. Հայկական կապիտալը Թիֆլիսում. Հայկական բանկերի և առևտրաֆինանսական մյուս հաստատությունների աճի դինամիկան 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2019, թիվ 1 (65), էջ 197-208:

6. Հայ վաճառականները և նրանց դերը Կրաստանի տնտեսական կյանքում 18-րդ դ. - 19-րդ դարի առաջին կեսին, «Տարածաշրջան և աշխարհ», գիտավերլուծական հանդես, հատոր X, N 2, Երևան, 2019, էջ 54-59:

Есяян Вардан Баграатович

Деятельность армянской буржуазии в Тифлисской губернии в 1846-1917 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении".

Защита состоится 6-го августа 2019 г., в 14<sup>00</sup> на заседании специализированного совета Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

## РЕЗЮМЕ

Влиятельная роль армянского торгово-промышленного класса в экономической жизни Закавказья в XIX веке имела исключительные проявления в Тифлисе и Тифлисской губернии. И это не случайно. Тифлис был экономическим и административным центром кавказского наместничества, поэтому здесь был сосредоточен также армянский промышленный капитал. Армянские купцы, вкладывая накопленные финансы в сферу производства, очень скоро стали крупными промышленниками и капиталистами. Сформировался Армянский промышленный класс, который, используя возможности Закавказья, за короткое время развил фабрично-заводское производство, создал крупные торговые компании, банковские и кредитные учреждения.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы. Во введении представлены актуальность исследования, его научная новизна, цели и задачи, методология, хронологические границы, анализ первоисточников и научных исследований.

Первая глава - «Армянский купеческий и мастеровой класс в Грузии и Тифлисской губернии», состоит из двух разделов. В первом разделе рассматриваются условия установления армян в Грузии: исторические предпосылки, обстоятельства, социальная среда городского населения и третьего класса (торговцев и ремесленников), факторы, которые позже позволили армянскому торгово-промышленному классу приобрести доминирующее положение во всех сферах торговли и предпринимательства в Тифлисской губернии. Купцы и ремесленники были свободными гражданами - мокалаками, которые играли значительную роль в экономическом развитии Тифлисской губернии, во внешней и внутренней торговле.

Во втором разделе рассматривается образование Тифлисской губернии, численность армян в ней, анализируются статистические данные городского населения, согласно которым число армян в городах губернии всегда превышало численность других народов, включая грузин.

Вкратце представлены армянские ремесла и артели Тифлисской губернии. Армянские ремесленники давали основную часть товаров ремесленной артели,

мелкого товарного производства губернии. Большая часть торговли также была сосредоточена в руках армян.

Вторая глава - «Армянские промышленные предприятия, торгово-финансовые организации в Тифлисской губернии (1870–1917 гг) и деятельность армянской буржуазии», состоит из четырех разделов. В первом разделе рассматриваются теоретические вопросы, поднятые в армянской печати 19-го века: критика, проблемы и предложения, касающиеся торговли, производства, образования, национальных проблем, благотворительности и т. д.

Во втором разделе говорится о развитии механизированного производства в Тифлисской губернии, которое стало результатом деятельности армянских промышленников. Подробно представлены крупные армянские предприятия, не имевшие конкурентов в Тифлисской губернии. Армянские предприниматели были основателями ряда отраслей, а многие сферы были почти полностью сосредоточены в их руках и имели абсолютную монополию. Армянским торговцам и промышленникам принадлежали большинство крупных акционерных обществ в Тифлисе и Тифлисской губернии, большая часть товарооборота, недвижимости и капитала. На основании статистических источников Российской империи мы установили, что экономическое превосходство армян было очевидно также и в торговой сфере. Доказательством экономического доминирования и материальной мощи являются приводимые нами в этой главе свидетельства о недвижимости и самых дорогих домах в Тифлисе, принадлежащих армянам.

В третьем разделе представлены армянские банки и кредитные организации, которые были первыми на всем Кавказе и сыграли важную роль не только в Тифлисской губернии, но и в финансово-экономической жизни всего Закавказья. Крупнейшими армянскими финансовыми и банковскими учреждениями были Тифлисская коммерческая компания, Тифлисская взаимная ссудная компания и Тифлисская городская ссудная компания, которые оставались вне конкурентными финансовыми организациями на всем Кавказе вплоть до установления советской власти.

В четвертой главе обстоятельно представлены наиболее выдающиеся торговые династии, влиятельные и крупные армянские предприниматели, банкиры, их общественная и благотворительная деятельность в области здравоохранения, образования, искусства, строительства. Большинство из них в полном объеме представлены впервые.

В заключении обобщены основные положения и результаты работы.

Yesayan Vardan Bagrat

The activity of Armenian bourgeoisie in the state of Tiflis in 1846-1917

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on August 6, 2019, at 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

#### SUMMARY

The influential role of the Armenian commercial-industrial class in the 19th century's economic life in the Trans Caucasus had exceptional manifestations in the province of Tiflis and in the city of Tiflis.

Tiflis was the economic and administrative center of the Caucasus vice regency, thus the commercial capital of Armenian merchandise was also concentrated there. The Armenian merchants rapidly became major industrialists and capitalists by investing in the manufacturing industry. The Armenian industrial class was formed, which used the development capabilities of the Transcaucasia and in short period of time formed a factory production, created major trading companies, banking and credit institutions.

Dissertation consists of introduction, two chapters, conclusions and a list of used literature. The introduction presents the relevance of research, scientific novelty, goals and objectives, methodology, chronological boundaries, analysis of sources and scientific studies.

The first chapter - "The Armenian merchant and craftsmen class in Georgia and in the state of Tiflis ", consists of two chapters. The first sub-chapter examines the historical preconditions, the circumstances, the social environment and the factors for Armenians to form the third class (merchants and craftsmen) after the establishment in Georgia, which further made it possible for Armenians to gain a dominant position in all aspects of trade and entrepreneurship in the state of Tiflis. The merchants and craftsmen were free citizens, mokalakas, who play a significant role in the economic development, foreign and domestic trade of the state of Tiflis.

The second sub-chapter touches upon the formation of the state of Tiflis, the number of Armenians in the state, according to the statistical data of the urban population, according to which the number of Armenians in the cities of the state has always exceeded the other nations, including Georgians. The Armenian guildship and crafts of the state of Tiflis were briefly presented. The Armenian craftsmen were the main part of the state's small commodity production. Most of the trade was in the hands of the Armenians as well.



Chapter Two - "Armenian Industrial Enterprises, Trade-Financial Organizations in the State of Tiflis (1870-1917) and the activity of Armenian bourgeoisie" consists of four subchapters.

The first sub-chapter examines the theoretical issues, criticisms, concerns and suggestions raised by the Armenian media of the 19th century concerning trade, production, education, national issues, philanthropy, etc.

The second sub-chapter presents the development of mechanized production in the province of Tiflis, which was mainly the result of the activity of Armenian industrialists. Large Armenian enterprises, which did not have competitors in the state of Tiflis, are represented in details. Armenian entrepreneurs were the founders of a number of industries, and many spheres were almost completely concentrated in their hands and they had absolute monopoly. Most of major joint-stock companies, commodity turnover, real estate, and capital in the state of Tiflis and in the city of Tiflis, belonged to the Armenian trade-makers.

On the basis of Russian imperial statistical sources, we have stated that the economic superiority of the Armenians was also evident in the trade arena. The evidence of economic domination and material strength of Armenians was also the data on real estate and the most expensive homes in Tiflis, which we refer to in this sub-chapter.

Armenian banks and credit organizations are presented in the third sub-chapter, which were the first in the whole Caucasus and had an influential role not only in the state of Tiflis, but also in the whole financial and economic life of the Trans Caucasus. The largest Armenian financial and banking institutions were Tiflis Commercial Bank, Tiflis Mutual Loan Company and Tiflis City Loan Company, which remained non-competitive financial institutions throughout the Caucasus up to the establishment of Soviet order.

Chapter Four thoroughly refers to the most prominent merchant dynasties, influential and large Armenian entrepreneurs, bankers, public activities, charities, healthcare, education, art, sponsorships, and most of them are fully presented for the first time.

The conclusions summarize the main provisions and results of the work.